


ԱԼ. ՍՄԻՐՆՈՎ, ՍԻԲԻՐՍԿԻՑ

ՅԵՐԿԱՆԱՑԻՆ ՔԱՐԻ ՀԵՏԵՎԻՑ

ԹԱՐԳ. ԲԵԼԻԿ ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԽՄԲ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1933



01 AUG 2013

21845
5080

891-715
U-61

30 MAY 2011

ԱԳԴՈՒ ՑԱՍՈՒՄԸ

1908 թվականի հունիսին Սև ծովի հյուսիսային ծովափնյա բնակիչները գարմացել են մի տարորինակ և անհասկանալի յերեվույթով. հարավային մութ գիշերներն այնպես լուսավորվեցին, ինչպիսին լինում են միայն բևեռային յերկրներում: Կես գիշերին առանց լամպի կարելի յեր գիրք կարդալ: Սկզբում կարծում եյին, վոր դա լուսինն ե այդպես պայծառ լույս տալիս, սակայն այդ գիշերները լուսին չկար յերկնակամարի վրա: Նոսր աստղերով սփռված հորիզոնը ջինջ եր և միայն նրա հյուսիսային մասում կարելի յեր փայլուն, արծաթաշող ամպիկներ նկատել: Թվում եր թե այդ ամպիկներից եր բղխում հանելուկային լույսը:

Այդպիսի ապիտակ գիշերներ դիտվում եյին նաև ամելի հեռու զեպի արեմուտք՝ Գերմանիայում, Ավստրիայում և Ֆրանսիայի հյուսիսային մասում: Այստեղ, այդ լայնության վրա մինչև այդ ժամանակ այդպիսի լուսավոր, հյուսիսային գիշերներ չեն յեղել: Այդ հանելուկային յերեվույթը գիտնականների ուշադրությունը դարձրեց եր վրա, բայց փորձելով բացատրել



Պատ. Խմբ. Հ. Հովհաննեսյան
Տել. Խմբագիր Տ. Խոչվանյան
Քարգմանիչ՝ Ի. Յեղիազարյան
Մրրագրիչ՝ Հ. Կորույան
Համապատ ե արտադրության 26 Հունիս 1933 թ.
Ստորագրած ե Տպագրելու 15 Սեպտեմբ. 1933 թ.
Գետերանի ապարան, Բերեզու

այն, աստղաբաշխները և գեղփիզիկները շվարեցին:

Իսկ ի՞նչն եր այդ դեռ չեղած յերեւութիւն պատճառը: Գիտնականները յերկար ժամանակ վիճում եյին և վերջիվերջո այն կարծիքին յեկան, վոր մեր մոլորակը խորասուզվեց մի ինչվոր կոսմիկական ամպի մեջ, վորը հանդիպել են րան համաշխարհային տարածության ճանապարհին, և այդ ամպի մանրագույն մասնիկներն են, վոր լույս եյին ճառագայթում:

Հունիսի կեսերին սկսվելով, սպիտակ գիշերները շարունակվում եյին և ամսի վերջին հասան լիակատար զարգացման: Հունիսի 29 լույս 30 գիշերն ամենալուսավոր գիշերն եր և միաժամանակ վերջին սպիտակ գիշերը, իսկ հետեւյալ որն ինչվոր մի ե'լ ավելի տարորինակ բան տեղի ունեցավ:

Այդ արդեն Սիրիոսմն եր:

Կանոկ կայարանից իրկուտսկու ուղղությամբ դուրս յեկալ հերթական մարդատար գնացքը: Առավոտյան ժամի վեցն եր: Ուղեգնացների մի մասը վագոնի լուսամուտների առաջը կանգնած հիանում եր հետ վագոն տայգայի տեսարաններով: Հանկարծ ուղեգնացներից մեկը ձեռքը մեկնելով գեպի լուսամուտը, ասաց.

— Նայեցե՛ք, այս ի՞նչ բան ե:

Յերկնային տարածության անհատակ խորություններից յերկրին եր մոտենում մի ինչվոր լուսափայլ կետ: Առաջին մոմենտում

նա գնդասեղի գլխի մեծություն ուներ, սակայն վայրկյան առ վայրկյան նա ավելի ու ավելի յեր մեծանում և շուտով գնդի ձև ընդունեց: Փայն այնքան պայծառ եր, վոր իրենով նսեմայնում եր արևի լույսը: Այնպիսի տպավորություն եր ստեղծվում, կարծես փայլող մարմինն ուղղակի նրանց վրա յե սրանում Առ սես թե ահա հենց հիմա կհարվածի գնացքը: Սակայն, գալարուն գծեր նկատելով և իր հետեւ վիցը հրեղեն գես թողնելով, հանելուկային գունդը տայգայի փշատերե կատարի հետեւումը ծածկվեց, իսկ նրա հետեւից մի խլացուցիչ վորոտընդուստ հարված ցնցեց խաղաղությունը:

Հետո ե'լի ու ե'լի:

Տայգան հառաչեց, յերկիրը, թվում եր, թե պատրաստ եր ճեղքվելու այդ հարվածներից: Իրկուտսկու և Գրազնոյարակի բնակիչները տներից սարսափով փողոցները դռւս թափվեցին—սարսափելի վորոտը նրանց քաղաքներին ել հասավ: Տատանվեց գետինը, լուսամուտներում չխչխկացին ապակիները, իրենց իրենց բացվեցին գռները:

Իսկ այն ժամանակ, յերբ ուղեգնացները գնացքից դիտում եյին հրեղեն գնդի թռիչքը, տայգայի խորքերում կյանքն ընթանում եր սովորականի պես: Տայգու չորքուտանի բնակիչները ափարտում եյին իրենց առավոտյան վորորդությունը, իսկ տունգուտներն իրենց անտա-

սային կայանատեղերում, պաշպանվելով մոռակների և մժղովկների տղաղոցից, խեղողող ծիսահաններն եյին վառում:

Խարույկի տակը նոր փառած փայտեր դնելով, տունգուս Լյուչետկանը դուրս յեկավ դադայից, վորպեսզի յեղջերուների վրա հսկի: Նա դեռ տաս քայլ ել չեր արել, յերբ հանկարծ նրան վրա տվեց ինչվոր մրրիկ և՝ ինչպես մի տաշեղ վերցնելով նրան, թփերի մեջը շղրտեց: Ծառ-հսկաները վորոտմունքով փովեցին զետնի վրա, իսկ զեպի յերկինք բոցի լեզուներ ձգվեցին: Իսկ թե հետո ի՞նչ յեղավ, Լյուչետականը չի հիշում, սակայն նա յերբեք չի մոռանա այն տեսարանը, վոր պատկերացավ նրա աչքերին, յերբ նա ուշքի յեկավ:

Ամբողջ տարածության վրա, Լյակուրի մոռայլ լեռնաշղթաներից սկսած մինչև սրածայր Բուրականը, — այստեղ ուր դեռ մի քանի րոպե առաջ փուլում եր մոլեզնոտ տայգան, այժմ մի համատրած սև տարածություն եր իր յերախը բացել, առանց մի հատիկ կենդանի թուփիկի, առանց մի հատիկ կանաչ ծառիկի: Կրակով այրված անտառը, սև ու մեռած, ընկած եր, ինչպէս հնձած խոտ: Լուս, դատարկ, անկենդան:

Սարսափ տիրեց Լյուչետկանին:

— Զարմա՞նք, զարմա՞նք... Ադդին¹⁾ բոլո

¹⁾ Ադդի-ըստ տունդուստիան հավատուեքի՝ փրոտի և կոյծակի գոգի:

բովին վերջ տվեց տայգուն—բացականչեց նաև՝ սարսափահար, սկսեց փախչել այդ սոսկալի տեղից:

ՅԵՐԿՆԱՅԻՆ ՔԱՐՀ

Տունգուսյան տայգում միւնույն բանը տեղի ունեցավ, ինչ վոր պատահեց Ֆրանսիայում հարյուր հիսուն տարի առաջ:

Այդ 1768 թվականին եր: Ֆրանսական մի փոքրիկ գյուղի գյուղացիներ խումբ-խումբ նստել եյին իրենց տների մոտ, բերքի մասին խոսելով: Հանկարծ յերեկոյան անամալ յերկընքում կայծակ փայլատակեց: Ինչվոր մի բան սուլելով անցավ և ընկավ գյուղի մոտ:

Վեր թռչելով իրենց տեղերից, գյուղացիները նետվեցին այնտեղ:

Մարդագետնի վրա, կիսով չափ հողի մեջը թաղված, ընկած եր մի մեծ սև քար: Նա այնքան տաք եր, վորին ձեռք տալ, չեր կարելի: Գյուղացիները սարսափահար փախան:

Փարիզի գիտությունների ակադեմիան հետաքրքրվեց այդ «հրաշքով» և գիտնականներ ուղարկեց այդ տարրինակ քարը հետազոտելու համար:

Գիտնականները հրաժարվեցին գյուղացիների պատմածներին հավատալուց այն մասին, թե հիրավի սև քարը յերկնքից ընկավ—այդ բանն այն ժամանակ այնքան անհնարին եր թվում:

— Դուք, հավանորեն, այդ բանը յերապումն եք տեսել, — ասացին գիտնականները դյուզացիներին, — յերկնքից չե՞ն կարող քարեր ընկնել:

Այժմ, հասկանալի յե, վոր վոչ վոքի մտքում այդպիսի տարակույս չի ծագի: Քարերի անկումն յերկնքից նույնպիսի բացատրելի յերեւյթ ե, ինչպես ձյունն ու անձրելը: Լենինգրադում, գիտություների Ակադեմիայի թանգարանում ամբողջ սենյակներ լիքն են յերկնքից ընկած քարերով: Այդպիսի քարերին մետեղիտներ անուն են տալիս. և այն՝ ինչ վոր միամիտ տունդումներն անվանեցին «ահեղ Ադղու Հրեղեն նետ», ուրիշ բան չեր, բայց յեթե մի ահազին մետեղիտ—վորեւ յերկնային մարմնի մի բեկոր: Հենց այն որը և այն ժամին մեր մոլորակը կտրում եր Պոնտ-Վիննեկե գիսավորի շափիդը: Հնարավոր ե, վոր տայգա ընկած մետեղիտն այդ գիսավորի մի բեկորն եր հանդիսանում:

Սակայն, բոլոր մետեղիտները, վորոնց անկումը դիտել են գիտնականները, մեծ չեն իրենց ծավալով. նրանցից ամենամեծը յերեսուն և վեց ու կես տոնն է կշռում: Մինչդեռ, դատելով այն յերեւյթներից, վորոնք տեղի ունեցան 1908 թվականի հունիսի 30-ին, այդ մետեղիտար պետք է հոկայական ծավալ ունենար և գուցե թե, իր զանդվածով նույնիսկ գերազանցում է Ամերիկայի Արիզոնյան այն մետեղիտին, վոր յերկը վրա յե ընկել դեռ նախա-

մատմական ժամանակներում: Արիզոնյան մետեղիտը մեկ հինգերորդ կիլոմետր տարածություն է բռնում և իր մեջը տաս միլիոն տոնն միայն յերկաթ է պարունակում:

Սակայն, յերկնային քարի գլխավոր արժեքը նրա ծավալի մեջ չե, այլ նրա կազմիչ մասերի մեջ: Մետեղիտների մեծ մասը յերկաթից ե կաղմված, բայց կարող ե պատահել, վոր տունդույան մետեղիտը մի այնպիսի նյութի մասնիկ է բերել իր հետ, վորը յերկը վրա չկա և վորը կողնի մարդկային հարցասեր մաքին շատ բան բաց անել նրանից, ինչ վոր դեռ բացված չե: Զե՞օ վոր յերկնքից ընկած քարերն արգեն շատ բան ասացին մարդուն յերկնային մարմինների կազմի մասին:

Տայդա ընկած մետեղիտով հետաքրքրվեցին Սիբիրի գիտնական աշխատավորները, սակայն նրանց վորձերը գտնելու այն տեղը, վորտեղ նա ընկալ, հաջողություն չունեցան: Հիմնվելով այն անձերի ցուցմունքների վրա, վորոնք գնացքից եցին դիտել հրեղեն գունդը, գիտնականներն իրենց վորոնումները սահմանափակեցին Կանսկ քաղաքի շրջանով, վորովհետեւ ականատեսները պնդում եցին, վոր գունդն ընկալ ինչվորայսանեղ, բոլորովին մոտիկ: Բայց յեթե հետազոտողների մտքովն անցներ վորոնումները փոխադրելու հինգ հարյուր կիլոմետր գեպի հյուսիս, նրանք միկնույն բանը պետք է լսելին անգարամերձ գյուղերի բնակիչներից—հրեղեն գունդն ընկալ այ այստեղ, Անգարայի

այն կողմբ»...իսկ յեթե մի յերկու հարյուր
հիսուն կիլոմետր ել առաջ շարժվեցին, նրանք
ուետք եւ վճռեցին, վոր մեաեռը պետք եւ վո-
րոնել նոյնիսկ վոչ ել Անգարայի այն կողմը,
այլ եւ ավելի հեռու—պողկամեննայա Տուն-
դուսկա գետի այն կողմը:

— Այս այնտեղ,—պետք եւ մատնանշեր
տունդուս-վորսորդը, այս գետի այն կողմը,—
մեծ հրաշք յեղավ։ (Ավանին) կարծում եր-
վերջը յեկավ։ Աղդին թափում, եր տայզան,
վերջ տարիս յեղջերուներին։ Անտեղ մի գնա,
րայի, Աղդին դարձյալ հրաբրկանա...»

Այն մարդկանց, վորոնք վորեե առարկա-
յի անկումն են դիտում հորիզոնի այն կողմում,
միշտ ել թվում ե, վոր այդ առարկան բավական
մոտիկ ե ընկնում, քան թե իրոք ե։ Այդպես
ստատահեց մետեորիտի անկման հետ։

Իսկ այդ ժամանակ սկսվեց պատերազմը,
հետո՝ հեղափիությունը։ Տունդուսյան մետեո-
րիտի մասին մոռացան և միայն տունդուս-
ները՝ յերեկոներն իրենց խարույկների մոտը
ժամանակ անցկացնելով, հիշում եյին յերբեմն,
թե ինչպես Աղդին թափում եր տայզան, չպըր-
տում դադաները, վերջ եր տալիս յեղջերու-
ներին։ Բարկացկո՞տ դաժա՞ն Աղդին։

1) Տունդուսներն իրենք իր նոց «Ավանին» կամ «Եվանին»
յեն անգամում։

2) Բայեր բարեկամ ընկեր։

ՆԱԿԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՔՍՊԵՇԻՑԻԱՑԻ ԱՌԹԻՎ

Այդ 1921 թվականի մարտի 21-ին եր։ Սառն
անդուր մառախուղը պատել եր Լենինգրադը։
Լուսամուտից գուրս խտանում եր մթնաշաղը։

Փամանակն եր, վոր գիտությունների Ակա-
դեմիայի աշխատակից Լեոնիդ Ալեքսանդրի չ
կուլիկն ավարտեր իր աշխատանքը մեներալո-
գիական թանգարանում։ Նա արդեն գլխարկը
դրեց, յերբ սենյակ մտավ «Միլօզենի»¹⁾։ Հա-
դեսի խմբագիր Սվյատոսկին։

— Այս բանը, հավանորեն, ձեզ կհետաքըր
քրի, — մեկնեց նա կուլիկին մի կտոր թուղթ։

— Այո՛ այդ հետաքըրիր ե, — ասաց նա,
թղթիկը կարգալով և գրպանը դնելով այն, —
յես կզբաղվեմ այս գործով։

Գիտնականի պահած թղթիկը 1910 թվա-
կանի հին հատվածական որացույցի հուլիսի
15-ի թերթիկն եր։ Այդ թերթիկի հետևում հա-
զորդագրություն եր տպագրված այն դեպքերի
մասին, վորոնք աեղի յեն ունեցել Սիրիոսմ
1908 թվականի հունիսի 30-ին։

Մտածողությունը տունդուսյան մետեորի-
տի մասին ամբողջովին աիրեց կուլիկին։ Մոսկ
վա միջնորդություն ուղարկեց միջոցներ

1) «Աշխարհագիտություն»։

բաց թողնելու մասին՝ մետեղիտային եքսպերտիցի համար, իսկ մի քանի որից հետո կուլիկը քաշվելով բարձրանում էր լայն սանդուխտներով գեղի ժողովրդական կոմիսարների Խորհրդի ընդունաբանը:

— Ժողկոմիորչի նիստը նշանակված եւ ժամի վեցին, — ասում ե գիտնականին պաշտպանողական ֆրենչ հաղած մի մարդ, — բարի հաճեցեք այդ ժամանակ գալ անձամբ զեկուցում ստալու համար:

Կուլիկը շուռ և գալիս և ուղղվում ե գեղի յելքի դուռը: Հանկարծ լուսմ ե.

— Ընկեր, մի ըստե...

Վերադառնում ե գեղի գրասեղանը:

— Ասացե՞ք, — մի փոքր շփոթված ասում ե ֆրենչով մարդը, ուշադրությամբ դիտելով գիտնականի վոտները, — միթե՞ դուք ուրիշները չունեք:

— Ուրիշները — զարմացած կրկնում ե, հարցը կուլիկը: Յես՝ միշտն ասած, չեմ հասկանում թե ինչի՞ մասին եք խոսում: ... Յեվ նույն պես դարձնում ե իր հայցքն իր յեկայն վոտների վրա:

— Ա՛խ, ահա եթ ինչի մասին ե ձեր խոսքը, — հանկարծ գլխի յե ընկնում նա, նկատելով, վոր իր ձախ վոտնամանից գուլպան դուրս ե ընկել, — իսկ յես արդեն կարծեցի, վոր իմ վոտները ձեզ չտիպազն յերկայն թվացին: ... իրոք վոր յես ուրիշ վոտնամաններ չունեմ,

սակայն Ակադեմիայում խոստացան, վոր շուտով տալու յեն...

— Բայց դուք մի անհանգստանաք, — ավելացնում ենա, — նիստին յես ամուր կոչիկներով կներկայանամ, — ընկերիցս կիմողրեմ: Նա հենց այժմ նոր վոտնամաններ ստացավ:

— Բայց մի՞թե չեք մըսում: Ներբանները բոլորովին թափվել են:

— Մի քիչ թրջվում ե, ճիշտ ե, թեպետ ե յես քիչ եմ ման գալիս: Ահա յես այժմ կվերագանամ տուն ե կչորացնեմ վառարանի վրա:

Ֆրենչով մարդը ժպտում ե և վերջնում ե մատիտը: Մի քանի առղ գրելով, նա բլոկ-նոտի թղթեկը մեկնում ե գիտնականին:

— Գնացեք այս հասցեյով և վոտնամաններ ստացեք: Այլապես դուք անվոտ կմնաք...

Եեվ ամուր կերպով սեղմում ե գիտնականի ձեռքը:

ՏԱՅԳԱՑԻՆ ԶՅՈՒՆԵՐՈՒՄ

Կուլիկն իր ակնկալությունների մեջ չսխալ վեց: Տունգուսյան մետեղիտակի գործն իր հովանավորության տակն առավ ժողկոմ Ա. Վ. Լունաչարսկին, վորը կուսժողկոմատի միջոցով այս ժամանակի տասը միլիոնից ավելի հատկաց ընց մետեղիտային եքութեղիցիայի համար: Ճշգրիտ գործություններում հատկացը համարակարման հիմնարկները

պարենի և պիտույքների մի թեթև բաժին բաց թողին կուլիկին:

Տեսկան ուղեգնացության համար դեպի տայգու խորթերն այդքան շատ անբավարար եր, սակայն ինչ՝ կարող եր տալ մի յերկիր, վոր նոր եր սկսել տնտեսական շինարարությունը: Կարերն այն եր, վոր հանելուկային մետեղիտի տի ուսումնասիրության համար առաջին քայլն արված եր, իսկ գիտնականի համար արդեն հենց այդ միակն եր կարեսոր:

1921 թվականի ամառն ու աշունը վկաների ցուցմունքները հավաքելու վրա յեն անցնում մետեղիտի անկման մասին: Սակայն կուլիկին հաջողվում ե մեկնել տայգու խորթը «տունդուս յան զարմանալիքը» վորոնելու համար միայն 1926 թվականին: Այդ ժամանակ, ի միջի այլոց, մետեղիտով հետաքրքրվեցին նաև արտասահմանում: Զեռներից ամերկացիքն արդեն ասում խոսում եին սեփական եքսպիդիցիայի պատրաստություն տեսնելու մասին:

Այս բանն անհանգստացնում ե գիտնականին. այստեղ ել նույն բանը դուրս չգա⁹, ինչ վոր պատահեց հանածո կենդանու—իխտիոզավրի ձվի հետ: Վաղուց անհետացած այդ կենդանու քարացած ձուն ուսւ գիտնականները գտան, սակայն այնպես դուրս յեկավ, վոր ամերիկացիներն այդ դյուտի մի մասն իրենց վերապրեցին:

Երկյուղն անցավ, յերբ կուլիկը վերջապես վագոն նստեց, —այժմ ամերիկացիք ե՛լ ա-

ռաջ չեն ընկնի: Ամպամած լենինգրադը հետեւումը մնաց: Լուսամուտների մոտով մուգ չերտով անցնում են Վյատկայի և Վոլոգդայի անտառները: Նրանց հետեւից ցցվում ե յերկինքը վշակատար Ռւրալը: Անծայր հարթավայրով հետ ե փախչում Բարաբինյան տափաստանը: Ահա և տայգան, գզգզված ու մոայլ, վոր եր խորքերումն ե թագցըել «յերկնային հրաշքը»:

Վոչ սիրալիք կերպով ընդառաջեց նա գիտնականին, վախեցնելով քառասուն աստիճանի սառնամանիքներով, անյելանելի ձյուներով: Սակայն այդ բանը նրան չչփոթեցրեց: Տայչետում իջնելով, նա սահնակով հասավ կեժմի՝ Անգարա գետի վրա—վերջին ավանը դեպի հյուսիս տանող ճանապարհի վրա: Այստեղ սահնակը բեռնատարի փոխանակելով, տայգային շավիղներով շարունակեց ճանապարհը, դեպի Պողկամենայա Տունդուսկա: Իսկ պետառետրակոն Անովար Թակառիտան համնելով, նա արդեն մետեղիտի անկման տեղի անմիջական մոտերքումը լույս ընկավ:

Տունդուսները ֆակտորիա յեն գալիս մորթիներ փոխանակելու ալյուրով և վառողով: Յեվթելետ այդ սնահավատ մարդիկը մետեղիտի անկման մասին տհաճությամբ են խոսում, այն ել վոչ ուրիշ կերպ, բայց յեթե կիսաձայն (Ագդին կլսի), Կուլիկին հաջողվում ե այս ու այն տեղեկություններն ստանալ նըրանցից դեպքի տեղի մասին: Մետեղիտը պետք ե վորոնել Պողկամենայա Տունդուսկայի

մյուս կողմը, ինչ վոր տայգային Խուշմո գետի
վերևներում:

Սակայն տայգան չի կամենում բաց անել
գաղտնիքները: Այդ շրջանը թափանցելու առա-
ջին փորձն անհաջող ե վերջանում:

Բեռնակիր ձիյերի ույժից վեր ե պայքարել
տայգայի գեմ: Թաղվելով ճյունի մեջ, նրանք
մըրկաթափի*) մեջ ջարդում են իրենց վոտները
և շուտով ուժասպառ լինում: Յեղջերուներ
պետք եյին. նրանք անցնում եյին արտերը,
վորտեղ ձին չի կարողանում անցնել. բայց ինչ-
պէ՞ս պետք եր ճարել այդ կենդանիներին: Սար-
սափելի վոզու ցասումից վախենալով, տուն-
գուսնեցը վճռականորեն հրաժարվում են վորե
ոզնություն ցույց տալ եքսպեդիցիային:

—Սա սարսափելի տեղ ե, ավանակներն
այնտեղ չեն գնում, —պնդում են նրանք, շար-
ժելով փրչոտ գլուխները:

Վերջապես մի տունգուզ համաձայնում ե:
Նա հանձն ե առնում եքսպեդիցիային հասցնել
մինչեւ այն տեղը, վորտեղ սկսվում ե մեռած
տայգան: Ակսում են պատրաստվել: Տունդու-
սը յեղջերուների վրա բարձում ե իր դագեն և
եքսպեդիցիայի բեռները, իսկ ճանապարհին
վերցնում ե իր կրտսեր կնոջը, ծծկեր մանկանը,
մեծ աղջկան և քրոջ փոքրահասակ վորդուն:

1) Մըրկաթափ թարգմանված ե նոր լուս բառը, փոր
նշանակում ե մըրկից թափված ծառեր և ճյուղեր:

Մանոթ. Խմբ.

Կայանատեղում մնում է նրա յերկրորդ ավագ
կինը նույն քանակությամբ յերեխաների հետ:

—Դու պետք ե կերակրես սրանց, իսկ պա-
ռավը կերակրի մյուսներին, —բացատրում ե
նա Կուլիկին:

Ինչպես և պետք եր սպասել ճանապարհոր-
դությունն այդպիսի բազաժով շատ ել արագ
չեր կատարվում: Յեվ անտառի մարդն ինչո՞ւ
պետք ե շոտապեր: Նրա տունն այնտեղ ե, վոր-
տեղ տայգա կա, իսկ այստեղ տայգան վոչ վերջ
ունի, վոչ ծայր: Բացի դրանից, յերկայն «Եյու-
չեն»¹⁾ բեռների մեջ շատ համեղ բաներ ունի՝
հաց կարագ, կոնսերվաներ, թեյ: Առավոտյան
թեյ խմելը սովորաբար, յերկու ժամից պակաս
չեր տեսում: Հետո տունգուս գնում եր անտառ
յեղջերուներ հավաքելու, վորի վրա նույնպես
շատ ժամանակ եր կորչում: Յեղջերուներ գրտ-
նելով, սկսում եյին դագեն հավաքել և բեռնե-
րը կապել և դրանից հետո միայն ճանապարհ
ընկնում: Իսկ մի հինգ կիլոմետր անցնելուց հե-
տո, տունգուսն սկսում ե իր չորս կողմր նա-
յել ժամանակ եր դագեն տնկել նոր գիշերա-
տեղի համար:

Այսպես շարունակվում եր տաս որ: Տասն
և մեկերորդ որը տայգան լուսավորվեց՝ առաջը
մի ահազին տարածություն բացվեց, վորի վրա
բոլոր ծառերը թափված եյին: Դահուկներով

1) Կուչե—ոռուա, կուլիկին յերկայն եյին կոչում նրա յեր-
կայն վոտների համար:



գնացող տունգուսը կանդ առավ և վճռապես
հայտարարեց.

—Յես վերջացրէ, ել դենը չեմ գնա...

իզուր եր նրան համոզել—վոչ մի բարիքի
համար նա չեր համաձայնի վոտ դնել սարսա-
փելի տեղը։ Այդ այն մըրկաթափի սկիզբն եր,
վոր առաջ բերեց ահեղ Ադրին։ Յեվ ահա գիտ-
նականի առաջ մի ինդիր ծառացավ՝ ինչ պետք
ե անել։ Տունգուսի պատմածից դատելով,
մըրկաթափն ահագին տարածություն ե բո-
նում, և մինչև նրա կենտրոնը գեռ մի քանի որ-
վա ճանապարհ ե մնում։ Եքսպեղիցիան կարող
կլիներ առաջ շարժվել նաև առանց ուղեցույցի,
բայց . . . բանից դուրս յեկավ, վոր տունգու-
սական փոքրիկ ընտանիքը շատ լավ ախորժակ ե
ունեցել։ Եքսպեղիցիայի բեռներում մթերք քիչ
եր մնացել...

Ստիպեցին դատարկածեոն հետ դառնալ
ֆակտորիան։

ԱՐԿԱԾՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Տունգուսից բաժանվելով՝ կուլիկը նոր
պլան կազմեց—մթերքները շավիզով տանել
ֆակտորիայից հարյուր կիլոմետր դեպի հյու-
սիս, իսկ այնտեղից մետեղորիտին մոտենալ գե-
տակներով։ Գարունը բացվում եր Զյունը նըս-
տում եր, թանձրանում։ Գետերի վրա սառույցի
վերի մասը հալչել ջուր եր դարձել։

Ժամանակ չկորցնելու համար վորոշեցին

այդ ջրի վրայով լողալ։ Բայց մինչդեռ լաստ
եյին շինում, սառույցն սկսեց կոտրվել և ՚սե-
լացիությունը թույլ չտվեց այդ համարձակ
ճանապարհորդությունն անել։ Ստիպված
յեղան սպասել։ Յերկու լաստ կապեցին. մեկի
վրա ձիյերին դրին, մյուսի վրա պարեն և գոր-
ծիքները բարձան։

Վերջապես գետը բանակատեղու մոտ ա-
զատվեց սառցից։ Լաստերն իջեցրին, մնում եր
միայն հրել՝ անիմանալի ճանապարհն ընկնելու
համար։ Այդ ժամանակ անտառի ծայրին
մարդկային մի կերպարանք յերեվաց տունգու-
սական յերկայն շապիկ հագած, վորը զանա-
գանագույն զոլերից եր կարված։

— Գնո՞ւմ ես, բա՛յե—դիմեց գիտնականին
այդ մարդը։

— Դե՛կ, գնա՛, գնա՛։ Այնտեղ անցնում ես
Դիլյուշման, հետո կնկնես Խուշմո, նրանով
կանցնես Ուխաղիտտա, իսկ այնտեղ կտեսնես
Մեծ ձահճի առվակը։ Յես չնորհհակալ կլինեմ
Ագուց, յեթե նորից տեսնեմ քեզ . . .

Դա տունգուսական շաման եր¹⁾։ Վերջին
խոսքերով նա ուզում եր նախազգուշացնել հա-
մարձակներին այն վտանգից, վորն սպասում
ե նրանց մեռած տայգայի յերկրում։ Բայց
թող կոկու իրեն համար—այժմ կուլիկը ճա-
նապարհի միշտ մարշրուտ ունի։ Դիլյուշմա,

¹⁾ Շաման—տունգուսական կոխարդ։

Խուշմա, Ուխաղիտատա—դրանք այն գետերի
անուններն են, վորոնցով պետք ենավարկեր
եքսպեդիցիան։ Հոսանքը ընդպրկում է լաս-
տերը և գետովը տանում նրանց դեպի ցած։

Երի՞կ—լաստերն ընդհարվեցին սառցա-
կույտին։ Դեռ չեյին կարողացել ուշքի դալ,
յերբ հետեւից, լաստերը ջարդ ու փշուր անելու
սպառնալիքով, սողացին սառույցները։ Յեր-
կու որ ու գիշեր կանգ առան, դաժան պայքար
մղելով սառույցների դեմ։ Յերբորդ գիշեր
ափ գուրս յեկան գիշերելու, իսկ յերբ առավոտ-
յան զարթնեցին, գետնի վրա վոչ սառցա-
կույտ կար, վոչ լաստեր։

Սառցե բարյերը պատռել տարել եր լաս-
տերի հետը միասին։ Նոկ ամեն ինչ լաստերի
վրա յեր—ձիյերը, մթերքը, զենքերը։

Բանվորները վախեցան և պատրաստ եյին
հրաժարվել առաջ գնալուց։ Ամբողջ հույսը
նրա վրա յեր, թե հետեւյալ սառցակույտը
լաստերի առաջը կկտրի։ Այլապես՝ կորչելու
յեն—առանց պարենի և զենքի տայգայից
գլուխ չես թափի։ Բարեբախտաբար, լաստերը
հեռու չեր տարել։

Հետեյալ որը նորից խրվեցին սառույցների
մեջ և այն ել առանց հույս ունենալու թե շու-
տով պատռվածք կբացվի։ Վորոշեցին քարշելով
հանել լաստերը սառցակույտի միջով։ Սկսե-
ցին բերը թափել։ Լաստերից մեկն արդեն բե-
ռից աղատ եր, մյուսի վրա դեռ մի քիչ բան
մնացել եր։ Այդ մոմենտին սառցակույտը

պատռվեց, ինչպես հասած խոց։ Այս անգամ
լաստն ընդմիշտ տարիվեց։ Նրան չդտան։

Գարունն այդ ժամանակ բուռն կերպով
բացվում եր, գետը շուտով մաքրվեց սառ-
ցից։ Իսկ յերբ սառույցն անհետացավ, նրան
փոխարինելու յեկան խութերը։ Գրեթե ամեն
մի կիլոմետրի վրա պետք եր լինում բեռը թա-
փել, խութերի (գետահունի ժայռ) միջով շա-
փկով տանել ծանրոցքը, հետո իջեցնել լաստը։
Այդ բանը շատ ժամանակ եր խլում, բայց դրա
փոխարեն, այստեղ, վորտեղ գետը մաքուր
եր, սուրում եյին գրեթե գնացքի արագու-
թյամբ։

Բայց ահա և Խուշմա դետի գետաբերանը,
վորի մասին հիշում եր շամանը։ Այժմ պետք
եր հոսանքին հակառակ լողալ, բայց նա այն-
քան սրբնթաց եր, վոր կաշեփոկների մեջը դըր-
ված ձին գժվարությամբ եր տանում ծանրա-
պես բեռնված լաստը։ Բոլորը, առանց եքսպեդի-
ցիայի պետի բացառության, կաշեփոկներից
բռնած ոգնում են ձիուն։ Իսկ այստեղ նոր
խոչընդուռ—գետը նեղ ե և հաճախ արգելք են
դառնում գարնանային հօրդությամբ բերվող
ծառերի լիցքերը։ Նրանց պետք եր մաքրել,
այլապես՝ լաստը չեր անցնի։ Հաղթահարեցին
լիցքերը—ակսում են խութերը, անցան խութե-
րը—ծանծաղուտի մեջ խըլեցին։ Յեվ այսպես
անվերջ։

Սակայն նպատակը մոտ ետայգան սկը-
սում ե փոխել իր տեսքը։ Հետզհետե ավելի

ու ավելի հաճախ սարալանջերում ինչ վոր կունդ տեղեր են յերեռում, վորոնց վրա բոլոր ժառերն արմատահան են արված: Դա սովորական տայզային մըրկաթափ չէ, վոր հաճախ և ոչատահում տայզայում—վորովիկն այդպիսի կանոնավոր շարքերով չի դարսում ծառերը: Իսկ այստեղ անտառն այնպես է ընկած, ասես թե դիտմամբ են արել այդ—ծառերն արմատահան շուր տալով, դարսել են շարքերով—ծայրերը միշկովմի վրա: Սովորական մըրիկը միթե՞ կարող են ման բան անել: Վո՛չ, այստեղ ինչ վոր մի ուրիշ ույժ ե գործել:

ՄԵՌԱԾ ԱՆՏԱՌԻ ՅԵՐԿԵՐԸ

Ահա թե ինչ արձանագրեց Կուլիկն իր որատեարում նրանից հետո, յերբ եքսպեդիցիան հասավ մինչև մեծ ճահիճը, վորի մասին հիշում եր տունդուսյան շամանք:

«Դարձյալ յերկու որ անցավ, մինչև վոր հաջողվեց վերջապես սեղմել լաստը ծանծաղուտ դարձած գետով դեպի առուն և բանակ դնել: Այստեղ հանդիստ առնելով, մենք հետո յերկու որ գնում եյինք դեպի հյուսիս, հոկայական ճահճի մոտով, վորը ներփակված եր լեռների կիսաշրջանում: Տայզան ընկած եր դետի վրա, ընդառաջ դալով մեզ իր ծայրերով և միայն ծառերի մի մասն եր կանգնած արմատի վրա: Բայց այդ մի սարսուռ ազդող անտառ եր—բոլոր ծառերն առանց կեղեկի և վոստի եյին և ի-

րենց վրա ուժեղ այրվածքի անտարակուսելի չետքեր եյին կրում: Աւ, մեռած անտառ: Դարձյալ մի տաս կիլոմետր և շուրջը ամեն ինչ մեկ է: Մըրկաթափը ծածկել եր լեռների լանջերը, բայց այժմ տապալված անտառի ծայրերը ընկած են վոչ թե դեպի հարավ, ինչ պես առաջ, այլ դեպի հյուսիս:

«Լեռնանցքի վրա մենք նոր բանակ դրինք և յես սկսեցի լեռներով պտույտ անել մեծ ճահճի շուրջը: Գողավորությունից դեպի արևմտութք մըրկաթափը ծայրերով դեպի արևմտութք եր ընկած. շուր յեկավ դեպի հարավ—մըրկաթափի ծայրերը նույնպես դեպի հարավ դարձան. իսկ դեպի արևելք անցնելով, յես այդտեղ ել միկնույն որինաչափությունը հայտնաբերեցի—տապալված անտառը ծայրերով դեպի արևելք եր ընկած:

«Տարակույս չկար, վոր ճահճի շուրջը պտտվելով, յես պտտվեցի մետեղրիտի անկման կենտրոնի շուրջը: Շեկացած գաղերի հրեղեն հոսանքով և կարծր մարմինների յերամով մետեղրիտային մասսան հարվածել եր գողավորությունը: Ինչպես, վոր ջրի հոսանքը, մակերեսութիվ վրա ընկնելով, ցայտեր և փոռած շորս կողմը, այդպես ել շիկացած գաղերի հոսանքը, գետնի մեջը խրվելով, ուայթյունի անդրադռնով և կատարիել այս բոլոր ավելումը: Ֆեղիկայի որենքների համաձայն՝ այստեղ պետք ել լինի նաև մի այնպիսի գոտի, վորտեղ ծառերը կարող եյին արմատի վրա

մնալ, — այդ այն տեղն է, վորտեղ յերկրի մակերևույթից անդրագարձած գազերի ալիքը յերկրի վրայից համեմատաբար ավելի բարձր է անցել: Յեվ այդպիսի գոտի կա այստեղ—զամեռած, կեղեկից և ճյուղերից զրկված անտառն է, վոր յեղերում և Մեծ ծահիճը:

«Հետո յես նորից սկսեցի շրջել ճահճի չորս կողմը, նեղանելով ըրջանները: Գողավորության մեջ մեռած անտառի հետեւում, հյուսիս-արևելյան մասում, յես հայտնաբերեցի տաս հարթ ձագար-խառնարան, վորոնք չափազանց նման եյին լուսնի ձագար-խառնարաններին: Նրանց ավելի ճիշտ եր նկարել ճահճի տունդրային մասում, վորտեղ դեռ չեր կարողացել վերականգնել ինչպես հարկն և գաղերով այրված բուսական ծածկութը:»

Զագարները գանագան մեծություն ունեն: Նրանց տրամագիծը 10-ից մինչև 50 մետր է: Խորությունը չորս մետրից ավել չե, բայց թե ի՞նչ խորությամբ են մտել մթնոլորտի բեկորները հողի մեջ-դեռ չի կարելի ասել՝ ձագարները լցված են հեղուկ տիզով: Յերբ յես նրանցից մեկի մեջը մտա մինչև կուրծքս խուրասուզվեցի հեղուկ ցեխի մեջ և հազիվ կարողացա դուրս պրծնել»:

Յեվ այսպես, խնդրի առաջին մասը, վորը ծառայել եր կուլիկի առաջ, կատարմած եր-յերկնային քարի անկման տեղը դտնված եր: Այժմ մնում եր սկսել գետնից հանել մետերի-

տի այն կտորները, վորը փշրվել եյին յերկրային մթնոլորտին շիվելիս: Մետեղիտները խրվում են յերկրային մթնոլորտի մեջ ահոելի, այսպես կոչված՝ կոսմիկական արագությամբ, վորը հավասար և մոտավորապես քառասուն կիլոմետրին մեկ վարկյանում: Այդ արագության հետեւանքով ամենաուժեղ կերպով խտանում ե ողք, վորի ջերմության աստիճանը հասնում ե մինչև մի քանի հազար աստիճանի: Հենց այդ ել առաջացնում ե մետեորիտային զանդվածի շուրջը շիկացած գազի ամպ, վորը զնղածե է: Այդպիսի գունդը կոչվում է բոլիդ:

Մետեորիտի շիման մոմենտում յերկրի մակերեվույթի հետ, նրա անկման արագությունը նշանակալից չափով նվազում է, բայց այնուամենայնիվ ավյալ դեպքում, շնորհիվ մետեորիտային զանդվածի հսկայական մեծության նա չառ մեծ եր: Մետեորիտի հսկայական ճնշումը ողի վրա հավասարազոր և հզոր հարվածի, այդ պատճառով ել մթնոլորտի մեջը մտնելով, այդ մետեորիտը պետք և մանր մասերի վերածվեր: Նրա մասերը հանելու համար, յերկարատև ժամանակ եր պահանջում—պետք և մի շարք նախապատրաստական աշխատանք կատարել, իսկ դրա համար անհրաժեշտ եյին շատ բանվորներ և վորոշ զործիքներ: Մինչդեռ եքսպերիմենտայի առաջ դարձյալ պարենի խնդիրը ծառացավ. միայն չորս որդար պարեն եր մնացել:

Տայգան կատակ անել չի սիրում: Իր խոր-

քերում պատսպարան տալով ամեն մի գազանի
և թռչնի, նա մինույն ժամանակ միշտ սովից
մեռնելու ոտվականով և սպառնում մարդուն:

Յերեմին դժվար է լինում վորս ճանկել,
իսկ մեռած անտառի Յերկրում նա ամենենին
չերևաց:

Պետք եր դարձյալ վերադառնալ և այդ վե-
րադարձը փախստի յեր նման: Ինչքան ել կրծա-
տում եյին բաժինները, բայց և այնպես ուտե-
լիք չմնաց բոլորովին: Մի յերկու անդամ ճահիճ
ներում բաղեր խփեցին, մի անդամ ել հաջող-
վեց մի քիչ ձուկ բոնել գետում: Սնվում եյին
գլխավորապես «փունջերով» տայգային բույ-
սով հովանոցավորների ընտանիքից:

Անովար Փակտորիան համելով, կուլիկն
արձակեց իր ջոկատը և՝ նավակով իջնելով
Պողկամենից տունդուսկայով դեպի Յենիսեյ,
վերադարձավ Լենինգրադ:

Հաջորդ գարնան նորից սկսեց պատրաստ-
վել ճանապարհ ընկնելու դեպի մեռած անտա-
ռի Յերկրը:

Այդ արդեն ավելի նախապատրաստված
եքսպեդիցիա յեր, սակայն գիտնականի համար
հազիվ հազ վողբերդական կերպով չվերջացավ:

Բանր Զամբե գետի վրա պատահեց: Սա-
հանքա ժայռերի վրայով եյին անցնում: Յերկու
նավակ արդեն անց եյին կացել, մնում եր
գերջինն անցկացնել: Այդ նավակում յերկու հո-
գի եյին նստած կուլիկը՝ դեկի վրա և բան-
վորը՝ քթի վրա, վորպեսդի ձողով հետ մղվեն

քարերից: Մյուսները նավակը պարանով քա-
շում եյին ափից:

Յերբ նավակը մոտեցավ գլխավոր ավազակույ
տին, հոսանքի ույժը նրան վրեց կողքի վրա,
իսկ հատեյալ ակնխարթին ջրով լցվեց նավակն
ու հատակն իջավ: Բանվորը կարողացավ դուրս
թռչել քարի վրա, իսկ կուլիկը նավակի հետը
միասին սուզգեց: Մի ըոսկե նա յերեցավ կա-
տաղի ջրապտույտում, բայց հետո իսկույն ել
ծածկվեց: Պատահմունքը փրկեց. գիտնականը
մի վոտքով այն պարանի մեջը խճճվեց, վորը
կապված եր նավակից, —հենց այդ եր, վոր
թռչյլ չտվեց հոսանքին շպրտելու նրան քարերի
վրա: Ջրի յերեսը դուրս գալով յեկորդ ան-
գամ, նա կարողացավ բոնել իրեն նետված պա-
րանի ծայրը:

Ափ դուրս գալով, Լեռնիդ Ալեքսանդրովիչն
ամենից առաջ ձեռքն իր ակնոցներին տարավ:

—Մ՛յ, սրան հաջողություն կասեն, սաղ սալա
մաթ են, — բացականչեց նա, զննելով ապակի-
ները, իսկ, հետո, ասես թե վոչ մի բան ել չի
պատահել և առանց յերկար ու բարակ խոսք ա-
սելու արկածի մասին, ձեռք առավ պարանը,
վորպեսդի բոլորի հետը միասին նավակը քա-
շի:

Հասնելով մետեղորիտի անկման տեղը, եքսպե-
դիցիան սկսեց աշխատանքները։ Աժենից առաջ
քնակատեղ կառուցվեց— յերկու ձմերանոց,
ինչպիսին շինում էն իրենց համար վորսորդները
զաղաններ վորսալիս։ Աժառ շոգ եր՝ արևի
տակ ջերմութունը քառասուն աստիճանի յեր
հասնում։ Մինչեւ եքսպեդիցիայի մասնակից-
ներն ստիպված եյին շարունակ շատ տաք
հազնվել։ բացի յերկու-յերեք շապկից՝ տաք
ֆուֆայկա կամ թանձր կտորից՝ բաճկոն, իսկ
գլխին ճոթից կարած տոպրակ բացվածքնե-
րով՝ բերանի և աչքերի համար։ Այդ բանն
ստիպում եր անել տայգային զեռունը—մըժ-
դուկների և մոծակների հրոսակները, վորոնք
ամբանը զիստում եյին տայգայում։ Նուրբ հա-
գուստը չի փրկի խայթոցներից։

Սակայն վորչափ ել ձանձրալի մինի զե-
ռունը, այնուամենայնիվ նրա գեմ կարելի յե-
պայքարել. նրա գեմ, բացի հաստ հազուս-
տից, ուրիշ միջոց ել կա, վորի մասին տուն-
դուսներն ասում են, վոր «ձմբանը նա դառն է
իսկ ամբանը՝ քաղցը»։ Դա ծխատուն ե—փառած
իսկ ամբանը՝ քաղցը։ Բայց ահա-
փայտից վառվող մեծ խարույկ։ Բայց ահա-
նոր թշնամու գեմ, վոր գրոհել ե մետեղորիտ
վորսացողների վրա, վոչ մի բանով չես պայքա-
րի։ Նա արդեն իրեն համար զոհեր են չել մարդ-
կանց մեջ—ամբան մեջ յերկու բանվորի վոտ-
ներն ու լողերն սկսեցին ուռչել։ Մի քանի որից

հետո նման յերկույթներ հայտնաբերվեցին
նաև կինոռապերատորի վրա։

Դա ցիսդան եւ նրան բժշկելու միջոց
չունեցին։ Խաչիլն այսինքն՝ յեռացրած ջրով
հարած ալյուրը, հետն ել խառնած մի քիչ յուղ
և շաքար—ահա թե ինչ եր եքսպեդիցիայի
ամենորյա կերակուրը։ Այդպիսի պայմաննե-
րում միակ փրկությունը տայգուց անհապաղ
դուրս գալն եր հանդիսանում։

Յեվ հիվանդացածներն իրոք վոր թողին
մեռած անտառի Յերկիրը, սակայն նրանց հե-
ռանալով եքսպեդիցիայի զրությունը չբարե-
լավվեց։ Մի վորոշ ժամանակից հետո յերկու
բանվոր ել հիվանդացան, և ապա կուլիկի ոգ-
նականը։ Առողջ մնացին միայն ինքը՝ կուլիկը
և մի բանվոր։

Պետք եր հեռանալ տայգուց, քանի գեռ
շարժվում եյին վոտները։ Վոչ մի տեղից ոգ-
նություն սպասելու հույս չկար։ Մինչեւ ամեն-
ամուսիթիկ բնակավայրը, պետառներական
Փակտորիան հարյուր հիսուն կիլոմետր ան-
տառային անանցանելի խորքեր եյին։

Կուլիկն առաջարկում ե իր ոգնականին և
հիվանդ բանվորներին անմիջապես թողնել
տայգան։

—Իսկ դուք—զարմացած հարցնում են
նրան

—Առայժմ առողջ եմ և հյուս ունեմ, թե չու
տով անձնատուր չեմ լինի հիվանդության։
Յես մնալու յեմ...

— Բայց մեզնից վոչ վոք չի ուզում մնալ
այստեղ...

— Գիտեմ: Յես մենակ կմնամ:

— Դուք կատա՞ղ եք անում:

— Վոչ մի կաթիլ: Յես պետք ե մնամ,
վորովհետեւ մազնիւոմետրիկական նկարա-
հանումը չեմ վերջացրել...

Հետեյալ որն եքսպեդիցիայի բոլոր մաս-
նակիցները, բացի Լեռնիդ Ալեքսեևիչից, թո-
ղին Մեծ ծահիճը, բայց՝ ուղղակի գնալով, մո-
լորվեցին և ստիպված յեղան վերադառնալ:
Վորպեսզի իր աշխատակիցներին տայբուց
հանի, դիտնականն առաջնորդեց նրանց մինչև
ֆակտորիա: Այստեղ վերջին փորձն արվեց
ստիպելու նրան, վոր հրաժարվի իր համար-
ձակ մտադրությունից:

— Յեկեք գնանք մեղ հետ: Ախր դուք դը-
րեթե չունեք մթերք: Դուք տայգայում մենակ
կկորչեք:

Սակայն կուլիկն անդրդվելի յեր:

— Դուք չափաղանցեցնում եք, բարեկամ-
ներս, —պատասխանեց նա.—Հուսանք, վոր ինձ
վոչ մի սարսափելի բան չի պատահի: Ինձ մզտ
ալյուր ե մնացել, իսկ դրանով կարելի յե ապ-
րել: Կվերջացնեմ նկարհանումն ու կվերադառ-
նամ: Բարի ճանապարհ...

ՏԱՅԱՅԻՆ ՌՈԲԻՆԶՈՆՆԵՐԸ

Իր աշխատակիցներին ճանապարհ դնելով
կուլիկը մնաց ֆակտորիայում: «Ֆակտորիա»

խոսքն արտասանելիս՝ ձեր յերեակայության
մեջ, թերես, պատկերանան մի շարք մեծ չեն-
քել, խանութներ, պահեստներ, տասնյակ ծա-
ռայողներ: Վո՞չ. տվյալ դեպքում դա մի ինչ
վոր ավելի համեստ բան եր: Յերկու փոքրիկ գե-
րանակապ խրճիթ, յերեք թեքված մառան, մի
մարդ ցիգանի սև մորուքով, վոր կառավարիչ
եր անվանվում, յերկրորդը. այտը կապած մի
մարդ, վորը տնտեսական զանազան պարտավո-
րություններ եր կատարում և՝ վերջապես, մի
փոքրիկ կին հսկայական լապչիներ (կոշիկ) հա-
գած, վորը տղամարդկանց համար ճաշեր և
ընթրիքներ եր յեփում, —ահա թե ինչ եր ներ-
կայացնում Անովար Փակտորիան:

Այդ որերում Փակտորիայում ելի մի մարդ
կար—կեժեմացի վորսորդ կիտիանը, վորը Փա-
կտորիայի համար խոտ եր հնձել: Ահա հենց դա
ել համաձայնեց ուղեկցել գիտնականին դեպի
մեռած անտառի յերկիրը: Կուլիկը շատ ուրա-
խացավ—այժմ նա աղատորեն կարող եր իր
խրճիթը տանել այն բեռը, վորը ինիկատի ու-
ներ:

Ֆակտորիայում ինչվոր մթերքներ կային
և գիտնականը կարող եր իր սակավիկ պաշարը
լրացնել Մեծ ծահճում, բայց այստեղ մեկնելիս
նա վճռեց վերցնել մի ուրիշ բան—յերկու թերթ
յուսամուտի ապակի և մի փոքրիկ բութույշ-
կա—յերկաթե վառարան խողովակների հետ
միասին:

Պատրաստվեցին: Ուտելիքից վերցրին մի-

այն այն, ինչ վոր անհրաժեշտ եր վերադարձի ճանապարհին, իսկ մնացած բեռը բաժանեցին այսպես. վառարանը խողովակներով կիտիանը շալակեց, իսկ ապակին՝ թղթի մեջը փաթաթելով, վերցրեց կուլիկն ինքը: Տայգայով հարյուր կիլոմետր տարածություն այդպիսի փրխրուն բան տանելը, ինչպիսին ապակին ե, հեշտ բան չե, սակայն գիտնականը հյուս ուներ, վոր ինքնայդ բանը հաջողությամբ զլուխ կրերի. նա իր փխրուն բնոն այնպիսի խնամքով եր տանում, ինչպես սիրող մայրն իր մանկանն ել չի տանի: Բայց այստեղ չնախատեսնված բան պատահեց:

Այդ՝ ճանապարհորդության վեցերորդ որն եր: Ժամանակի համաձայն ճանապարհորդներն արդեն տեղ պետք ե հասած լինելին, բայց մտածելով կրծատել ճանապարհը, տեղ-տեղ ուղղակի ելին գնում: Այդ բանի հետևանքն այն յեղագ, վոր ճանապահը վոռչ թե կրծատվեց այլ յերկարեց—մի խորանոր անցնելով, նրանք կորցրին ուղղությունը և մոլորվեցին: Իլրումն՝ կիտիանն ել հիվանդացավ և՝ հազիվ եր կարողանում վոաները շարժել, այնպես վոր գիտնականը ստիպված յեղագ վառարանն ել շալակել: Բեռն այնքան ել ծանր չեր, վորքան անհարմար եր տալու համար, սակայն կուլիկը տանում եր անտրունջ: Խնամքով իջեցրեց նա իր բեռը, յերբ նրանք այդ յերեկո կանգ առան գիշերելու: Վառարանը դրեց ծառի տակը, վերևից խողո-

վակը վրես գրեց, իսկ կողքին դեմ տվեց ապակին:

Քիչ բան կար ուտելու, ուստի ստամոքս-ները չագի) նաստոյկայով վաղողելով, չուտով քնով ընկան—քնած ժամանակ քաղցն այնպես չի զգացվում: Հաշվում եյին, վոր յերեք որից հետո կհանին խրճիթը: Լուսնիու պայծառ գիշեր եր: Յերբեմն ինչ վոր տեղից մեզմ քամի յեր փշում և սոսավյուն հանում խիժուտ փիհի ների բարձրունքներում:

Գիշերվա մեջ յերկաթի զրնդոցը զարթնեցրեց կուլիկին: Աչքերը բաց արեց: Ինչ վոր մեկը շարժվում է վառարանի մոտ:

Կիտիանն անդորր քնով քնած ե, քթի մեջը խոացնելով: Խարույկը հանդագ և միայն կարմիր սուտակի նման առկայծում են վերջին ածխիկները, մոխրով սղոքվելով: Վառարանի մոտի խշացոցը չի դատարում: Այստեղ ինչվոր ժեկը կա: Զգուշությամբ տեղիցը բարձրացագ: Այժեղ բան, արջը թիր ներ թխելու պատրաստություն ե տեսնում: Այստեղ ել մի միտք և ծագում—վատ չեր լինի գաղանին սպանել, նրա միսը յերկար ժամանակ կրավականանար: Վոր՝ աեղ և վենտովիկան: Շունչը բռնելով ձգվեց զեպի հրացանը: Հանկարծ ծառի տակին դրդոց և գաղանային մռնչյուն: Վառարանը մեկ կոմն ե թոչում, զազանը՝ վախից խելագարված

1) Զագաւ—յելունդներ՝ կեչի ծառի բների գրա, փորսնք ունչի յեն սաման Սիրերաբնակները յերբեմն յեփում ևս պանց բեյի փոփոքն:

մյուս կողմը։ Վերևից նրա վրա թափվեցին յերկաթե խողովակները...

Յերկար ժամանակ լսվում էր, թե ինչպես եր խուժում մացառուտը սաստիկ վախեցած գազանը, իսկ յերբ ամեն ինչ խաղաղվեց, կուլիկը վեր կացավ և մոտեցավ դեպքի տեղին։ Մնաք բարով, մտորումներ, լուսավոր ձմերանցի մասին։ Աղակիները, վորոնց նա այնպես ինամբ քով եր տանում, փշուր-փշուր ելին յեղել։

Յերրորդ որվա յերեկոյան հասան խրճիթը։ Փոքրիկ վառարանը տեղավորվեց ձմերանցում և տաքություն ցողեց, սակայն, այն տեղը՝ վոր նկատի յեր առնված լուսամուտի համար, անձեռնմխելի մնաց։ Նկարահանության նյութերի մշակումը և բոլոր գրավոր աշխատանքները պետք եր կատարել կամ կիսախավարի մեջ, կամ խրճիթի դուռը բաց անելով, կամ բաց յերկնքի տակ։ Սովորական պայմաններում բացությա աշխատանքը շատ հաճելի կարող եր յերեալ, սակայն այսոեղ այդ բանը շատ մեծ դժվարությունների հետ եր շաղկապահած—սկզբից չարչարում եր գեռունը, հետո սկսեցին անձրեներն ու ցըտերը։ Մոտենում եր աշունը։

Մեկը մյուսի հետեւից այսպես սահեցին ուրերը Մեծ ձահճի վրա։

— Իսկ յեր՞բ ենք դուրս գալու այստեղից—հարց տվեց մի անդամ կիտիանը։

Կոպասենք, մինչև նահինները սառչեն, այն ժամանակ յես կփորձեմ ձաղարները ահուայս բանով,—դլխով արեց գիտնականը մազնիտոմետրի վրա։—Հը, ի՞նչ կա, ձանձրացար մի քիչ։

— Ինչպես՝ չձանձրանաս։ Յեթե այստեղ տայդալիներ, ելի մի բան եր, բայց ախր այս քամբախր։ Նայում ես նրա վրա—և ուզում ես շան պես վոռնալ։ Վոչ գազա՞ն, վոչ թռչուններ ես տեսնում։

— Այո, վայրը շատ ել ուրախ տեղ չե, — համաձայնեց գիտնականը։—Բայց գիտե՞ս ինչ։ Յերեակայինք, վոր մենք այստեղ յերկու հոգի յենք։ Իբրար դիմենք միայն հողնակի թրվով։

Այդ որվանից այդպես ել յեղավ։
Կուլիկը՝ կիտիանին.

— Իսկ ժամանակը չե՞ արդյոք, ընկերներ, վոր սկսենք թեյ իմել։ Մենք այսոր կարգին մըսեցինք։

Կիտիանը՝ կուլիկին.

— Մենք այսոր վորսի եյինք գնացել և բավականին հաջող։

— Ճարեցինք յերկու բուրունդուկ)։ Ընկերները ճաշից գոհ կմնան...

Կոմնակի մարդն այսպիսի խոսակություններ լսելու յե, այս մարդկանցը խելագարների տեղ պետք ե դներ, սակայն տայգային

1) Բուրունդուկ—գետնի սկյորու

սորինդոնների համար «Հողնակի թիվը» յերբեմն կուրյողների և առողջ ծիծաղի աղբյուր եր:

ՍՈՎԻ ՌԻՄՎԱԿԱՆԸ

Տնտեսական աշխատանքներն ընկած եյին կիտիանի վրա: Մի անգամ նա ասաց գիտնականին.

— Իսկ գիտեք, ընկերներ, մենք ստիպված ենք կրծատում անել:

— Յուղը գերջանալու վրա՞ յե:

— Վոչ միայն յուղը, այլ և շաքարը: Յուղից մի կտոր ե մնացել իսկ շաքարից՝ մի բուռ...

Ստուգելով պարենը, վորոշեցին—յուղի և շաքարի մնացորդները չծախսել, հետ քցելով նրանց տայգայից վերապառնալու ճանապարհի համար, իսկ այժմ սնվել գլխավորապես ալյուրի խաշիլով և վորսի մսով: Սկսեցին վորսալ, սակայն բացի բուրունդուկներից վոչ մի վորս չեր պատահում: Ասենք այդ փոքրիկ գաղաններն ել քիչ ելին. մի բուրունդուկ ճանկելու համար՝ յերբեմն պետք եր լինում մի ամրող որ կորցնել, իսկ ի՞նչ ե բուրունդուկը, յերբ ածուխի վրա յես խորովում: Մեկ անգամ կու տալու համար ել քիչ ե:

— Վո՞չ, — վճռեց գիտնականը, — վորսորդության արդյունքները չեն արդարացնում այն աշխատանքը, վոր նրա վրա յե ծախսվում: Փորձենք ձկնորսությամբ պարապել:

Կողով գործեցին: Տասնյակ բավական խոշոր զամբուիկ բունեցին: Մի շաբաթ կիտիան ուշախ եր գնում և նույնիսկ միքանի անգամ փորձում եր ինչպոք մի յերգ զլել: Բայց հետո վարձյալ մոայլվեց՝ ձուկը հեռացավ ձմերելու մի ավելի խոր գետի մեջ և բոլորովին դադարեց վորսվելուց:

Այն ժամանակ դարձյալ պատրաստվում եյին բուրունդուկներ վորսալու, բայց այսուեղ ել միենույն բանը պատահեց: Բուրունդուկը հետաքրքիր գազանիկ ե. նա սիրում է իրեն համար պարենի մեծ պաշարներ պատրաստել, կըրելով նրանց իր բունն այտի հետեւում գտնը-վող տոպրակներով: Յեկ ահա յեղենու շատ կաղիններ և զանազան բույսարմատներ կըրելով իրենց մառանները, գեանի սկյուռները փակ վեցին բներում և բոլորովին դադարեցին պատահէլուց:

Նախաճաշին խաշիլ, ճաշին խաշիլ, ընթրիքին խաշիլ:

Յեկ այն ել տրվում եր ճիշտ այնքան, վորքան անհրաժեշտ եր, վորպեսզի սեփական ձեռքը կծելու գայթակղություն առաջ չդար:

«Յերանի թե ձմեռը չուտ դար», շատ անգամ մտածում եր կիտիանը, թաղիծով նայելով մեռած անտառի տիսուր տեսարանին: Նա գիտեր, վոր գիտնականը չի հեռանա այնքան ժամանակ, մինչեւ չհետազոտի ձագար-խառնարանները մաղնիտոսմետրով: Մենա՞կ հեռանա: Վոչ. կիտիանն այդ բանին բնդունակ չե:

Ինչվոր մի անդամ կուլիկն ասաց.

— Ահա թե ինչ, բարեկամ. կես արա այն, ինչ վոր մնացել ե մեղ մոտ նպարանոցում, վերց բու մի մասը քեզ համար և ճանապարհ ընկիր։ Յես իրավունք չունեմ քեզ այստեղ սովամահ անելու։

Սկզբում կիտիանը վոչ մի պատասխան չըտվեց։ Յեվ միայն այն ժամանակ, յերբ գիտնականը կրկնեց իր առաջարկությունը, տայդացին կարճ կերպով սաց.

— Յեկանք միասին և կդնանք միասին։ Կը գնանք, յերբ ամեն ենչ արված կլինի, ինչպես պետք ե...

Յեվ այդ մասին այլես հարց չեր բարձրանում։

Իսկ ձմեռը գալ չեր ուղում, ասես թե մոլորկել եր հյուսիսի տունդրաներում։ Այդեն հոկ տեմբերն եր։ Քնելու պառկելիս, սպասում ելին, վոր գիշերը սառնամանիքը կշղթայի տիղմը ձագարների մեջ և նրանք մատչելի կղանան հետագուտթյան համար, սակայն սառցի կեղեկին այնքան բարակ եր, վոր շունն ել չեր գիմանա։

Վառվող վառարանի լույսից ոգտվելով, կիտիանը մի անդամ նստեց հարյուրյերորդ կարկտանը դնելու իր վարտիկի վրա, իսկ կուլիկ՝ գամմելով նրա կողքին, մատեմատիկական հաշիվներ եր անում։ Փոքրիկ վառարանը տաքություն եր ցողում։ Լսվում եր, թե ինչ-

պես դրսից խուլ և միապաղաղ աղմուկ եր քամին։

Հանկարծ մի սուր վոռնոցի ձայն խանդարեց անդորրդությունը։ Շներն եյին դրսից հաշացին։

— Ահա այս նորություն ե, — գլուխը բարձրացրեց դիտնականը, — մեղ մոտ այդպիսի դեպք դեռ չեր յեղել...

— Յեվ ինչպես են հաչում, — ասեղը ցած դրեց կատանը, — ուղղակի խեղդւմ են։

Վերցրեն հրացաններն ու նետքեցին գիշերվա մեջ։

Բանը նման եր կիտիանի պատմութան այն մասին, թե ինչպես մի անդամ բազեն սովամահ լինելուց փրկեց տայգայում մոլորված մի մարդու. նրա վերեկց թռչելով՝ թռչունն իր մազիլներիցը վար քցեց նրա առաջն իր բռնած սկյուռին։ Այժմ չները հաչում եյին մի ահագին հոյակապ յեղջյուրներով յեղջերուի վրա։ Նա՝ ըստ յերեսոյթին, պատահմամբ եր ընկել այստեղ, վորովհետեւ մինչեւ այդ ժամանակ ոորինցոններին վոչ մի անդամ այդ գաղանի հետքերը չեյին պատահել։ Դատաստանը կարճ յեղավ։ Ճարդկանց ինչվոր մի տաս քայլ մոտ թողեց Շների հաջոցին յենթարկված յեղջերուն սարսափահար յեղավ և մարդկանց ինչվոր մի տաս քայլ մոտ թողեց խավարի մեջ։ Կուլիկը մեկ հրացանաձգությամբ նրան գետին ժռեց։

— Այժմ ապրում ենք։ Նրա միսն ամբողջ ձմեռը մեղ բավական կլինի...

Այդ գիշեր չքննցինք: Գիտնականը մշակում և ջոկղը կում եր յեղջերվի միսը, իսկ Կիտիանն ընարում եր համեղ կտորները և խորովում փոքրիկ վառարանի վրա: Արթուն եյին հազ շները, կատարելապես բաժանելով իրենց տերերի ուրախությունը:

ՀՈՒԶՄՈՒՆՔ

Մի քանի որից հետո, մի պղինձ յեղջերամիս յեփելով, Կիտիանն ուղեռվեց գեպի գետր, վորպեսպի զետի սառուցով պատած ժամանակը կողովը ջրից դուրս հանի: Գետն արդեն առաջին սառուցյն եր կապում: Ամեն որ կարելի յեր սպասել, վոր ձյուն կգա:

Մինչեւ գետը մոտավորապես յոթ կիլոմետր եր, սակայն Կիտիանը չուտ վերադարձավ: Առանց ձմերանոցը մտնելու, ուղղվեց գեպի ճաճիճը, վորտեղ գիտնականն իր մագնիտոմետրովն եր դեգերում:

— Դուք վոչինչ չլսեցի՞ք—հարց տվեց նա կուլիկին:

— Վոչ, — պատասխանեց նա. — Հը՛, ի՞նչ կա: Ինչո՞ւ դու այդպես չուտ վերադարձար:

— Մենք այստեղ մենակ չենք: Խուշմոյի այն կողմից յետ յերկու կրակոց լսեցի...

Գիտնականը մի թեթև ձայն հանեց և մագնիտոմետրը տեղափոխեց մի ուրիշ տեղ:

— Իսկ այդ մասին դու ի՞նչ կարծիք ունես:

— Յես կարծում եմ, վոր ձմերանոցից չպետք է հեռու գնալ:

Փամփուշտներ ունենալն ել չի խանգարի... Գնդակավոր փամփուշտներ իրոք, վորքիս ունեյին նրանք, իսկ նրանց դրության մեջ փամփուշտները կարող եյին ավելորդ չերեվալ: Յեվ իսկապես, ո՞վ և ինչի՞ համար կարող եր մեռած անտառի Յերկիրը գալ: Վորսորդներն այստեղ անելու բան չունեյին—վո՛չ տունդուսները, վո՛չ ոռւաներն այստեղ յերբեք չեյին գալիս:

Այդ մասին մտածելով, Կուլիկը հիշեց այն առասպելը, վոր տայգան եր հյուսել նրա անվան շուրջը: Տայգում համոզված եյին, վոր մետեօրիտի վրա աշխատելով, Կուլիկը յերկընքից ընկած քար չի վորոնում, այլ՝ վոսկի...

Այն ել վոչ միայն վորոնում ե, այլ արդեն գտավ—ամբողջ սարեր...

Այդ առասպելը գիտնականը լսել եր նաև Անգարայի վրա, կեժմայում և Փակտորիայում: Այն ել եր լսել, վոր մարդիկ կան, վորոնք պատրաստ են սեփական աչքերով նայել այդ ֆանտաստիկական վոսկու վրա: ԳոնեՊողկամեննայա Տունդուսկայի ձմերանոցներից մեկն եյին մտել ինչվոր մի քանի զինված կամականի մարդիկի, վորոնք հետաքրքրվում եյին, թե ինչպե՞ս կարելի յե անցնել տայգա, Կուլիկի խրճիթի մոտ:

Մինչ փամփուշտներով եյին զբաղված, վրա հասավ գիշերը: Թանձր խավարը ճնշեց խրճիթը: Վորոշեցին հերթով քնել:

Ճարճատում եյին փայտերը վառարա-
նում, վհատնրեն հառաջում եր քամին պատե-
րի հետեւում:

Ժամանակը ձգձգվում եր, ասես թե շղթա-
ներով կաշկանդել եյին: Վերջապես ծագեց
աշնանային մոայլ լուսաբացը:

Հսկողությունից հերթափոխությամբ ա-
զատվելով, գիտնականը թէկնեց թախտի վրա,
յերբ հանկարծ լսվեց Կիտիանի ձայնը.

— Սարից զինված ջոկատ և իջնում...

Հրացանները լցրին և դուրս յեկան ձմերա-
նոցից:

Իրոք, վոր—մի ամբողջ ջոկատ՝ տաս բեռ-
նակիր ձի: Կիտիանը մնաց ձմեռանոցի մոտ,
իսկ կուլիկն ընդառաջ գնաց: Սարից նկատե-
ցին նրանց, սկսեցին քշել ձիերին: Ահա ձիա-
վորներից մեկը մյուսներից առաջ ընկալ և
արշավեց սարի տակը: Նրա կերպարանքն ինչ-
վոր ծանոթ թվաց կուլիկին: Յեվ հանկարծ
լսվեց մի ձիչ.

— Վողջո՞ւյն կուլիկին...

Լցված հրացանը մի կողմն ե թոչում, իսկ
մի բռպեյից հետո յերկու մարդ իրար գերկն են
սեղմում միմյանց:

Այդ ի՞նչպես նա իսկույն չճանաչեց նրան:
Դա ի. Մ. Սուլովյուն եր, գիտնականի գործունյա-
ռոգնականներից մեկը մետեղիտի նրա վորո-
նումների մեջ: Այժմ նա եքսպերիմենտ յե-
կագ, վորին կուլիկին ոգնության եր ուղար-
կել խորհրդային հասարակայնությունը:

ՍՈՑԻԱԼԻԶՄԻՆ ԾԱՌԱՑԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Քաղվածք եքսպերիմենտիային մասնակցողնե-
րից մեկի որատետրից:

«Հուզված մտքերով մենք մտանք տայգա-
յին շավիղը: Տայշետից մեր գուրս գալու նա-
խորյակին սիրիյան լրագրերը հաղորդեցին,
վոր անդարամերձ գյուղերից մի քանի աքսորա-
կան բանդիտներ են փախել, վորոնք ոպերացիա-
ներ կատարելով Պողկամենսկիյ Տունգուսկու-
լիկրեներում, հարցումիորձի յեն յենթարկում տե-
ղական վորսորդներին թե ինչպե՞ս հասնեն կու-
լիկի խրճիթը: Բանդիտները կարծում եյին,
վոր գիտնականը տայգայում վոսկի յե վիճա-
ռում: Այդ անհեթեթ առասպելը մենք լսում
եյինք Մերձանդարիայի բնակիչներից շատե-
րից»:

Բարեբախտաբար, յերկյուղն անձնուրաց
գիտնականի վիճակի համար զուր անցավ: Հե-
ռավորությունը և մրկաթափը, վոր չորս
կողմից շրջապատել եր նրան ամենահսկայա-
կան ծառաթափով, հուսալի պաշտպանու-
թյուն եյին ծառայում նրա համար անկոչ
հյուրերից: Գիտնականը և նրա միակ բանվո-
րը, հավատարիմ կիտիանն—առողջ յերեացին,
բայց սաստիկ նիհարած կյանքի ծանր պայման-
ներից և անբավարար սննդից: Տարակուսա-

կան ե, թե նրանց կհաջողվեր դուրս գալ այս-
տեղից առանց կողմնակի ողնության։ Բացի
յեղջերուի մսից, նրանք գրեթե վոչ մի մթերք
չունեյին։

Չնայելով այս բանին, գիտնականը չեր
մտածում ընդհատել աշխատանքը, մտածելով
ավարտել այն միայն նրանից հետո, յերբ սառ-
նամանիքները ձագարները մատչելի կղարճնեն
հետազոտության համար։ Եքսպեդիցիան անձ-
նական մասնակցությամբ ողնեց կուլիկին ա-
վարտել մաղնիտոմետրիկական նկարահանու-
մը։ Այժմ մնում ե պեղումներ անել։ Մետեո-
րիտի մասերը հողից հանելով, տունդրույան
տայգու գաղտնիքները կրացվի և «յերկնային
յեկվորից» կվերցվի խորհրդավոր ծածկույ-
թը...

1928 թվականի դեկտեմբերին կուլիկը վե-
րադարձավ Լենինգրադ, իսկ հաջորդ տարվա
դարնանը նա նորից Մեծ ծահճի խրճիթումն է։
Մկում են աշխատանքային ոովորական որե-
րը—մանրամասն հետազոտությունը մեռած
տայգայի, վոր հազար քառակուսի կիլոմետր
տարածություն ե բռնում և մետեորիտի մա-
սերի հանումը։ Արկածային ոոմանտիկան
այլելք այստեղ տեղ չունի—Փակտորիայից
դեպի մետեորիտը շավիդ ե շինված, մթերք-
ները տարվում են ավելի կամ պակաս կանոնա-
վորությամբ, իսկ կուլիկը ջոկատի բանվոր-
ների պատմությունները ցըցին այն «վոսկե»

առասպելը, վոր հյուսել եյին տայգացիք
«տունդրայան զարմանք»-ի շուրջը։

Պողպատե գայլիկոնը փորձում է Մեծ ծա-
հճի խորքերը, սակայն, աշխատանքները մեծ
դժվարությունների հետ են շաղկապված—հո-
ղի հաստությունն այստեղ 50-60 սանտիմետր
է, իսկ հետո դալիս ե հավիտենական սառածու-
թյուն։ Բարդ մեքենաներ այստեղ բերել չի կա-
րելի տեղի պայմանների պատճառով։ Սակայն,
այդ բանը գիտնականին չի շփոթեցնում։

— Այնուամենայիվ մենք նրան գուրս կքա
շենք... գուրս կքաշենք աղավնյակին և այսպես
թե այնպես կծառայեցնենք նրան սոցիալիզ-
մին...

ՀՀ Ազգային գրադարան



NL0395123



Ց Ա Ն Կ

Ագդու ցանումը	3—7
Ցերկնային քարը	7—10
Նախապատրաստություն եքսպեղիցիայի առթիվ	11—13
Տայզալին ձյուներում	13—18
Արակածների ճանապարհին	18—22
Մեռած անտառի յերկիրը	22—27
Տայզան սպառնում ե	28—30
Տայզային Ռոբինզոնները	30—36
Սովի ուրվամկանը	36—40
Հուզմունք	40—42
Սոցալիզմին ծառայեցնելու համար	43—45

5080